Քո հարն ալ շատ վարձկ արեր, շատ կարմունջ կապեր գետերուն:
Դու ալ մէկ վարձկունք մ'արաւ՛ , պագ մը տուր դընչիդ մօտերուն:

ՏԱՍՆԵԻԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Եարուկ մի սիրեր եմ ես որ երեսն երեք ծին ունի.
Բերանն է բոլոր 'ւ աղուոր, տուփ նըման քան զմանուշակի.
Հանչանք ջանացի հետ իր որ իւրմէն պագիկ մի առի.
Ի քաղցրութենէն, եղբա՛րք, բռընկեր է պըռկունքս ու կ՛այրի:

Բ.

Պագնե՛մ զայդ քո լայն ճակատդ, որ աչեր ունիս ղազալի:
Գըրկեմ զայդ քո ուռ միջկունքդ, դու հագեր ես շար կապանի.
Աչեր ղազալի ունիս, գէմ ունիս ուներ Թաթարի,
Ատով խոցեցիր դու զիս ու զարկիր յիս հետ սահարի:

Գ.

Բազան երբ քաղցրած լինի, որսն առնու՝ այնով գընպաղի.
Սանուկ՝ սիրոյ տէր լինի, պագն առնու՝ կարօտն անացնի.
Ա՛մ, ի՞նչ ենեմ, ա՛յ հոգի, ա՛մ, քանի պագնեմ նա պիտի,
Հիմի ի ծոցուդ ելայ, դեռ աչերս ի յետ կու հայի:

Դ.

Ով որ սիրու տէր լինի, ճարն այն է որ թէզ մի գանգտի,
Գանգատըն սըրտին հոգ տայ, թէ չէ նէ սիրտըն կու պատռի.
Գանգատն ի սըրտին միջին նայ պահէ որ ինք չերեւի,
Ցերակ մուխ ու ծուխ կենայ, յանըրկած օր մի կու մեռնի:

Ե.

Հանց եղեր եմ քո սիրուն զինչ ամառն աւազն որ կ'այրի:
Զօրն ի բուն յերկինքն ի վեր կու հայիմ կաթիկ մ'անձրեւի:
Երբ ըզձուկն ի ջրէն հանեն ու ձըգեն՝ նա թալեթըլի.
Իմ սիրտս ի քո շատ սիրուդ քան զայն ձուկն այլ խիստ կու տապի: